

11768



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան



«07» 11 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 237 - 24

Նախաձեռնող՝

«ԱՐՑԵՄԵՆՏ» ՍՊԸ
Արմավիր, Շահումյան 3 նրբ., 9

Գործունեությունը՝

Արագածավան բնակավայրում ցեմենտի
գործարանի կառուցում և ցեմենտի
արտադրության կազմակերպում
Թափն համայնք, Արագածավան բնակավայր

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 237 - 24

«07» նոյեմբերի 2024 թ.

Թալին համայնքի Արագածավան բնակավայրում ցեմենտի արտադրամասի կառուցման և ցեմենտի արտադրության կազմակերպման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԱՐՅԵՄԵՆՏ» ՍՊԸ
Փաստաթղթերի փաթեթ՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն,
Գործունեության տեսակ՝	«Ա» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արագածոտնի մարզ, Թալին համայնք Արագածավան բնակավայր

Ներածական մաս. «ԱՐՅԵՄԵՆՏ» ՍՊԸ-ի կողմից Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրում նախատեսվում է կառուցել ցեմենտի արտադրամաս և կազմակերպել ցեմենտի արտադրություն: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-110-Ն) 14-րդ հոդվածի 4-րդ մասի 7-րդ կետի «ա» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ է:

Նախագիծը մշակվել է Թալինի համայնքապետարանի կողմից 2023 թվականի հոկտեմբերի 26-ին տրված 98 նախագծման թույլտվության պահանջներին համապատասխան:

Ցեմենտի արտադրամասի համար նախատեսված հողամասը (այսուհետ հողամաս) զբաղեցնում է 8300 քմ մակերես, որից կառուցապատման մակերեսը՝ 24% է, կանաչապատման մակերեսը՝ 76%: Նախատեսվող շինության բարձրությունը՝ 15 մ է: Ցեմենտի տարեկան արտադրողականությունը նախատեսվել է 25 տ/ժամ կամ 73,000 տ/տարի: Հողամասն ըստ նպատակային նշանակության արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական է, ըստ հողատեսքի՝ արդյունաբերական օբյեկտների:

Նկարագրական մաս. Հողամասը հանդիսանում է դեռևս ԽՍՀՄ տարիներին գործող երկաթ-բետոնե կոնստրուկցիաներ արտադրող գործարանի հատված, տարածքում հողաբուսական շերտը, ծառափայլին բուսականությունը բացակայում են, առկա է 762,34 քմ մակերեսով շինություն: Հողամասն Արագածավան բնակավայրի բնակելի թաղամասից գտնվում է առնվազն 1300-1400 մ հեռավորության վրա: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է 2 փուլով՝ շինարարություն և շահագործում: Արտադրամասի կառուցման շինարարական աշխատանքները տևելու են մոտ 24 ամիս: Շինարարության փուլում արտադրամասի կառուցապատման համար նախատեսվում



հրապարակ է բերվելու ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով, իսկ խմելու ջուրը՝ Արագածավան բնակավայրից: Ջրառը նախատեսվում է իրականացնել նաև արտադրամասի հարևանությամբ գտնվող «Լևադան» ՍՊԸ-ի արտադրական տարածքում գտնվող խորքային հորից՝ ջրօգտագործման պայմանագիր կնքելուց հետո:

Անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար տեղադրվելու են բիզնես-պլաններ, որոնց մաքրումը կատարվելու է համապատասխան լիցենզիա ունեցող մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է փոել ավազ կամ մանրախիճ՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքի դեպքում հողի աղտոտումը կանխելու համար, շինարարական և ցեմենտի արտադրության նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա, ապահովվելու է շինտեխնիկայի և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ: Շինարարական տեխնիկայի վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում: Շինարարական թափոններ և շինանյութ տեղափոխող մեքենաների համար սահմանվելու է ժամանակացույց և ընտրվելու են հատուկ երթուղիներ: Աշխատանքների ավարտին տարածքը մաքրվելու է շինարարական աղբից և իրականացվելու են բարեկարգման աշխատանքներ:

Աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնները (շինարարական աղբ, տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ, քանդման թափոններ) հեռացվելու են տարածքից օրենքով սահմանված կարգով:

Շինարարական աղբը կուտակվելու է անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և տեղափոխվելու է Թալինի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ 5կմ հեռավորության վրա գտնվող աղբավայր: Շինարարական նյութերի մնացորդները (մետաղական մասեր) և վտանգավոր թափոնները հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են կապալառուի կողմից: Օգտագործված յուղերն ու քսուքները հավաքվելու են առանձին տարաների մեջ և հանձնվելու են վերամշակման կետերին: Բացառվելու է աղբի կուտակումը շինհրապարակից դուրս՝ այլ տարածքներում:

Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները նախապես որոշված կլինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:

Աշխատանքները կատարվելու են՝ բացառելով երեկոյան ժամերին աղմուկ առաջացնող աշխատանքների իրականացումը, օգտագործվող տեխնիկական և մեքենաները ապահովված են լինելու խլացուցիչներով, բացառվելու է շահագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ, պահպանվելու են աղմուկի, վիբրացիայի համար սահմանված նորմերը:

Աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու նպատակով նախատեսված են կանխարգելիչ, ինչպես նաև հակահրդեհային միջոցառումներ:

Աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ միջոցառումները:



1. մթնոլորտային արտանետումների (փոշի, ծխազագեր) և աղմուկի ու թրթռումների մակարդակի մշտադիտարկում՝ շաբաթական մեկ անգամ,
2. ջրային և հողային ռեսուրսների որակի ուսումնասիրություններ՝ պարբերաբար,
3. շահագործվող տեխնիկայի և տրանսպորտային միջոցների պարբերական ստուգումներ՝ օրենսդրությամբ սահմանված կարգով,
4. հարակից տարածքներում կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ ամսական մեկ անգամ:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության գործընթացում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ազդակիր համայնքում (Արագածավան բնակավայր) անցկացվել է հանրային քննարկում: Նախաձեռնողը պարտավորվել է նախատեսվող գործունեության արդյունքում ստեղծել բարենպաստ պայմաններ համայնքի բնակիչների համար: Ստեղծվելու են նոր աշխատատեղեր և նախատեսվում է ցեմենտի արտադրության աշխատանքների մեջ ընդգրկել Արագածավան բնակավայրի բնակիչներին: Նախատեսվում է համայնքի սոցիալապես անապահով և խոցելի բնակչությանը տրամադրել սոցիալական աջակցություն, աջակցել համայնքին ծրագրերի իրականացման և շինարարական աշխատանքների հարցում, մասնակցել համայնքի զարգացմանը և բարեկարգմանը: Հանրային լսման ժամանակ մասնակիցները հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը:

Նախաձեռնողը պարտավորվել է շինարարության ընթացքում պատշաճ ձևով իրականացնել շրջակա միջավայրի վրա առաջացող ազդեցությունները բացառող կամ նվազագույնի հասցնող միջոցառումներ:

Նախատեսվող գործունեության ընթացքում մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված միջոցառումներն իրականացվելու են «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջների պարտադիր կատարմամբ:

Հողային ծածկույթի վրա լրացուցիչ ազդեցություն չի կանխատեսվում, քանի որ տարածքը նախկինում կառուցապատված է եղել:

Թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացվելու է «Թափոնների մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով պետական կառավարման մարմիններից, Թափնի համայնքապետարանից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ, որոնք նախաձեռնողի կողմից հաշվի են առնվել հաշվետվությունը լրամշակելիս:

Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

Փորձաքննական պահանջներ

Նախատեսվող գործունեության ընթացքում անհրաժեշտ է ապահովել հետևյալ փորձաքննական պահանջների կատարումը՝

1. շինարարական աշխատանքների ընթացքում շինարարական հրամարակից դուրս փոշու տարածումը կանխարգելելու նպատակով առաջնորդվել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով (տարածքի ցանկապատում, շենքերի և շինությունների ծածկում համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով



տարվա չոր և շոգ եղանակներին տարածքների ջրցան, օդերևութաբանական անբարենպաստ պայմանների առաջացման դեպքում լրացուցիչ միջոցառումների իրականացում, շինադրի և շինարարական նյութերի պահում և տեղափոխում անթափանց ծածկոցով և այլն),

2. շահագործման փուլում պարբերաբար իրականացնել ցեմենտի արտադրության հոսքագծի թևքային զտիչների փոխարինում նորերով,

3. ջրային ռեսուրսների պահպանության նպատակով առաջնորդվել Ջրային օրենսգրքի և իրավական այլ ակտերի պահանջներով, բացառել ջրային ռեսուրսների աղտոտումը և աղբոտումը, ջրառն իրականացնել բացառապես ջրօգտագործման թույլտվությունում նշված նպատակով,

4. շինարարական աշխատանքների ավարտից հետո իրականացնել տարածքի կանաչապատում և բարեկարգում: Կանաչապատումն իրականացնելիս առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N 108-Ն որոշման պահանջներով, կանաչապատումն իրականացնել տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ՝ դրանց հետագա պարտադիր ոռոգմամբ և ապահովել հաշվետվությունում ամրագրված կանաչապատման մակերեսը,

5. շինարարության ընթացքում առաջացող թափոնների գործածությունն (հավաքում, փոխադրում, տեղադրում, պահում, հեռացում և այլն) իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

6. ապահովել հաշվետվությամբ ներկայացված բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների պլաններում (օդի որակ, ջրային և հողային ռեսուրսներ, կենսաբազմազանություն, աղմուկի մակարդակ և այլն) ամրագրված բոլոր միջոցառումների իրականացումը:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ


«Արցեմենտ» ՍՊԸ-ի կողմից Արագածոտնի մարզի Թալին համայնքի Արագածավան բնակավայրում ցեմենտի արտադրամասի կառուցման և ցեմենտի արտադրության կազմակերպման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝




Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Քրիստինե Հարությունյան